ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԱՑ-ԱՄ-2018/68

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2018թ. թիվ 03/26-3/9456-18 գրությամբ «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 22.05.2018թ. թիվ ԱՇ/285-18 գրության հիման վրա, 25.05.2018թ. թիվ 03/26-3/9456-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին (այսուհետ՝ Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է, որ Շնողի համայնքապետարանի կողմից հայտարարվել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն, «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ն և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

«ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշվել է՝ հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն:

Այնուհետև՝ «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն 02.03.2018թ. ներկայացրել է բողոք (ԳԲԽ-ԱՄ-2018/35), որով խնդրել է փոփոխել «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին թիվ 2 արձանագրությունը՝ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը ճանաչել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Արդյունքում ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 19.03.2018թ. կայացրած որոշմամբ որոշել է՝ «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի 02.03.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացրած որոշումից հետո «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն 16.03.2018թ. վարչական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմում-բողոք է ներկայացրել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, նշելով՝ որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումներ, որոնց համար ենթակա են պատասխանատվության, մասնավորապես՝ նշված գնման գործընթացի ընթացքում բողոք է բերել 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցը, ով, նույնիսկ այն դեպքում, երբ բավարարվի բողոքը՝ հաղթելու շանսեր չունի: Նշվածից ակնհայտորեն հետևում է, որ սույն պարագայում այդ երկու կազմակերպությունները գործում են համաձայնեցված և 3-

րդ տեղը զբաղեցրած կազմակերպության կողմից բողոք ներկայացնելը բխում է այդ համաձայնությունից և միտված է նրան, որ հաղթող ճանաչվի 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցը: 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցը տվյալ պարագայում կհրաժարվի գնման գործընթացին հետագա մասնակցությունից, որպիսի պարագայում բողոքաբերը,որպես 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից, ձեռք կբերի պայմանագիր կնքելու կնքելու իրավունք և արդյունքում պայմանագիր կկնքվի ոչ թե ամենացածր գին առաջարկած անձի հետ, այլ ամենաբարձր գին առաջարկած անձի հետ, այսինքն կիրականացվի մրցույթի հայտարարման նպատակի տրամաբանությանը լրիվ հակասող գործընթաց ...:

Ի պատասխան վերոնշյալ դիմում-բողոքի՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի մարտի 16-ին «Թումանյանի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ) կողմից ստացվել էր դիմում-բողոք (այսուհետ՝ Դիմում) գնման գործընթացում հնարավոր հակամրցակցային համաձայնության առկայության վերաբերյալ:

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից Հանձնաժողով ներկայացված Դիմումի հիման վրա օրենքով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Շնողի համայնքապետարանը 2018 թվականի փետրվարի 12-ին հայտարարել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցում՝ Շնող համայնքի 3-րդ փողոցի փոսային նորոգման և վերականգնման աշխատանքների համար: Հրավերին մասնակցելու հայտ են ներկայացրել երեք ընկերություններ՝ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն, «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (այսուհետ՝ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններ):

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման փաստ չի հայտնաբերվել, ուստի Հանձնաժողովը 2018 թվականի մայիսի 16-ին ընդունել է «Թումանյանի ճանապարհաշինարարական շահագործման

ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 59-Ա որոշումը:

Միաժամանակ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն հայտնել է, որ վարչական վարույթի շրջանակներում բացահայտվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հնարավոր խախտման փաստ: Մասնավորապես՝ Հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների միջև առկա է փոխկապակցվածություն: Սույն հանգամանքի մասին է վկայում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում (https://www.e-register.am) առկա տեղեկատվությունը, համաձայն որի՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի տնօրենը և 100% բաժնեմաս ունեցող մասնակիցը Մայիս Վահրադյանն է, իսկ «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի 100% բաժնեմաս ունեցող մասնակիցը Տաթևիկ Մայիսի Վահրադյանն է, ինչպես նաև Հանձնաժողովի՝ 2018 թվականի ապրիլի 20-ին տեղի ունեցած նիստի ժամանակ «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների ներկայացուցիչների հայտնած դիրքորոշումը, որով վերջիններս հաստատել են, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի տնօրեն և 100% բաժնեմաս ունեցող մասնակից Մայիս Վահրադյանը և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ում 100% բաժնեմաս ունեցող մասնակից Տաթևիկ Մայիսի Վահրադյանը հայր և դուստր են, այսինքն՝ ընտանիքի անդամներ:

«Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ թիվ 526-Ն որոշում) 32-րդ մասի 16-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգին արգելվում է սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը առաջարկել է քննարկել «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը: Միաժամանակ խնդրելով Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրել նշված խնդրի առնչությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից իրականացված միջոցառումների ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Ընկերությունը նշել, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի վարույթում թիվ ՍՑ-ԱՄ-2018/68 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2018թ. թիվ 03/26-3/9456-18 գրությունը: Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 22.05.2018թ. թիվ ԱՇ/285-18 գրությունը՝ խնդրում է նախաձեռնել «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Իսկ ինչպես արդեն նշվել է, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.05.2018թ. թիվ ԱՇ/285-18 գրությամբ հնարավոր է համարվել «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների կողմից «Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 32-րդ մասի 16-րդ կետի պահանջների խախտման թույլ տալու փաստի առկայություն:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին...:

Այսպիսով, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ.Անանյանի վարույթում գտնվող թիվ ՍՑ-ԱՄ-2018/68 ընթացակարգ նախաձեռնելու համար հիմք է հանդիսացել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.05.2018թ. թիվ ԱՇ/285-18 գրությունը, որով խնդրվել է նախաձեռնել բողոքարկման գործընթաց «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06406394) և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04727286) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, քանի որ վերոհիշյալ

մասնակիցները հնարավոր է, որ թույլ են տվել Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտում:

Մինչդեռ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը հստակ սահմանում է, որ միայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Այս պարագայում ստացվում է, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը չհանդիսանալով պատվիրատու և իրավունք չունենալով տվյալ գործով հանդես գալու պատվիրատուի կարգավիճակում, այնուամենայնիվ թիվ ԱՇ/285-18 գրությամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը նախաձեռնելու «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06406394) և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04727286) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար պաշտոնական ընթացակարգ:

Ավելին, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը հստակ սահմանում է, որ պատվիրատուն կարող է դիմել լիազոր մարմնին միայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, ըստ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն թույլ են տվել Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտում:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2018/68 ընթացակարգը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնվել է և՛ ոչ պատշաճ սուբյեկտի (տվյալ գործով պատվիրատու չհանդիսացող ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի) գրության հիման հիման վրա, ոչ էլ պատշաճ իրավական

հիմքի համաձայն, ինչի հետևանքով նշված ընթացակարգը իրավաչափ չէ և հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներին:

- Ավելին՝ մասնակիցը կարող է ընդգրկվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այնինչ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը 22.05.2018թ. թիվ ԱՇ/285-18 գրությունով խնդրել էր նախաձեռնել բողոքարկման գործընթաց՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար՝ Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների հնարավոր խախտման հիմքով (այն է՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին):

Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում առկա չէ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ հիմքի խախտում, իսկ Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների հնարավոր խախտումը հիմք է միայն մասնակցի հայտը մերժելու, այլ ոչ թե վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի հրավերի թիվ 2 Հավելվածով նախատեսված հայտարարությունը իրականությանը անհամապատասխան գնահատելու հնարավորությանը, ապա անգամ նման հնարավոր գնահատականի դեպքում կարող էր ի հայտ գալ միայն 22.12.2010թ. ընդունված և այլևս չգործող «Գնումների մասին» ՀՀ օրենքով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք հանդիսացող կեղծ տվյալի ներկայացումը, սակայն, ինչպես հայտնի է՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված և ներկայումս գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքով «կեղծ տվյալի ներկայացումը» որպես մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք հանվել է օրենքի տեքստից:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստարկները և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ Ընկերության կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում թույլ չտալու հիմքով:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 12.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 20-րդ բաժինը նվիրված է «Փոխկապակցված անձանց» իրավական կարգավորմանը:

Մասնավորապես, Կարգի 119-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Սակայն տվյալ դեպքում առկա չի եղել այդ երկու մասնակիցների կողմից Կարգի 119-րդ կետով նախատեսված, համաձայնեցված գործելը՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից: Ընդ որում, վերոհիշյալ փաստը հաստատվել է նաև Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 16-ին ընդունված «Թումանյանի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության դիմումի հիման վրա

հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 59-Ա որոշմամբ, որի համաձայն՝ վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման փաստ չի հայտնաբերվել: Ուստի ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի հայտերը մերժելով այն հիմքով, որ երկու ընկերությունների հիմնադիրները հանդիսանում են փոխկապակցված անձինք, մինչդեռ գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված անձ լինելու հանգամանքը չի ապացուցվել, քանզի տվյալ դեպքում ապացուցվել է միայն հայր և դուստր լինելու հանգամանքը:

Բացի այդ, «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2018թ. մայիսի 22-ի նիստի վերջնական գնահատման արձանագրությունը, որում մերժվել են «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի հայտերը, www.gnumner.am կայքում հրապարակվել է միայն 08.06.2018թ., մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը պետք է հրապարակվի տեղեկագրում, ինչը տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից չի կատարվել, որի արդյունքում խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Ընկերությունը խնդրում է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստարկները և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»՝ Ընկերության կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում թույլ չտալու հիմքով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/68 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 11:45-ին, 06.06.2018թ. ժամը 10:30-ին և 13.06.2018թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>«Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ և ի լրումն՝ 13.06.2018թ. ներկայացված գրությամբ՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշման մեջ նշված նույն հիմնավորումների շրջանակներում հայտնել է, որ առկա չէ «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

«Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/68 ընթացակարգի շրջանակներում 01.06.2018թ. ժամը 11:45-ին, 06.06.2018թ. ժամը 10:30-ին և 13.06.2018թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 06.06.2018թ. ժամը 10:30-ի և 13.06.2018թ. ժամը 10:05-ի նիստերին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. **<u>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ներկայացված փաստերը.</u>**

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.05.2018թ. թիվ ԱՇ-285-18 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը 2018 թվականի մարտի 16-ին «Թումանյանի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ) կողմից ստացել էր դիմում-բողոք (այսուհետ՝ Դիմում) գնման գործընթացում հնարավոր հակամրցակցային համաձայնության առկայության վերաբերյալ:

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից Հանձնաժողով ներկայացված Դիմումի հիման վրա օրենքով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Շնողի համայնքապետարանը 2018

թվականի փետրվարի 12-ին հայտարարել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցում՝ Շնող համայնքի 3-րդ փողոցի փոսային նորոգման և վերականգնման աշխատանքների համար: Հրավերին մասնակցելու հայտ են ներկայացրել երեք ընկերություններ՝ «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն, «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (այսուհետ՝ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններ):

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման փաստ չի հայտնաբերվել, ուստի Հանձնաժողովը 2018 թվականի մայիսի 16-ին ընդունել է ««Թումանյանի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 59-Ա որոշումը:

Հանձնաժողովը միաժամանակ հայտնել է, որ վարչական վարույթի շրջանակներում բացահայտվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հնարավոր խախտման փաստ: Մասնավորապես՝ Հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների միջև առկա է փոխկապակցվածություն: Սույն հանգամանքի մասին է վկայում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում (https://www.e-register.am) առկա տեղեկատվությունը, համաձայն որի՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի տնօրենը և 100% բաժնեմաս ունեցող մասնակիցը Մայիս Վահրադյանն է, իսկ «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի 100% բաժնեմաս ունեցող մասնակիցը Տաթևիկ Մայիսի Վահրադյանն է, ինչպես նաև Հանձնաժողովի՝ 2018 թվականի ապրիլի 20-ին տեղի ունեցած նիստի ժամանակ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների ներկայացուցիչների հայտնած դիրքորոշումը, որով վերջիններս հաստատել են, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի տնօրեն և 100% բաժնեմաս ունեցող մասնակից Մայիս Վահրադյանը և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ում 100% բաժնեմաս ունեցող մասնակից Տաթևիկ Մայիսի Վահրադյանը հայր և դուստր են, այսինքն՝ ընտանիքի անդամներ:

«Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված

փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 32-րդ մասի 16-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգին արգելվում է սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն առաջարկել է քննարկել «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը:

5. ՍՑ-ԱՄ-2018/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/68 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Շնողի համայնքապետարանի կողմից Շնողի համայնքապետարանի կարիքների համար Շնող համայնքի 3-րդ փողոցի փոսային նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Վահրադյան Շին», «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունները և «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ն:

2. «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ի 16.03.2018թ. գնման գործընթացում հնարավոր հակամրցակցային համաձայնության առկայության վերաբերյալ դիմում-բողոքի հիման վրա ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում

հարուցվել է վարչական վարույթ: Հանձնաժողովի կողմից 16.05.2018թ. կայացվել է ««Թումանյանի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 59-Ա որոշումը:

Նույն որոշմամբ Հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների միջև առկա է փոխկապակցվածություն:

3. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը 22.05.2018թ. թիվ ԱՇ/285-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, առաջարկելով քննարկել «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը:

<u>6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2018թ. թիվ 03/26-3/9456-18 գրությունը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 22.05.2018թ. թիվ ԱՇ/285-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգին արգելվում է սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Կարգի 119-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝ նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

Կարգի 120-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 119-րդ կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

Շնողի համայնքապետարանի կողմից Շնողի համայնքապետարանի կարիքների համար Շնող համայնքի 3-րդ փողոցի փոսային նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Վահրադյան Շին», «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունները և «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի բողոքի հիման վրա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 19.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/35 որոշմամբ Շնողի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.02.2018թ. թիվ 2 արձանագրությամբ

կայացված՝ «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը փոփոխվել է և «Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

«Թումանյան ՃՇՇՁ» ԲԲԸ-ն 16.03.2018թ. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին ներկայացրել է դիմում-բողոք «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների կողմից «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնման գործընթացում հնարավոր հակամրցակցային համաձայնության առկայության վերաբերյալ:

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից Հանձնաժողով ներկայացված Դիմումի հիման վրա օրենքով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման փաստ չի հայտնաբերվել, ուստի Հանձնաժողովը 2018 թվականի մայիսի 16-ին ընդունել է ««Թումանյանի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» բաց բաժնետիրական ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 59-Ա որոշումը:

Նշված որոշման շրջանակներում Հանձնաժողովը միաժամանակ հայտնել է, որ վարչական վարույթի շրջանակներում բացահայտվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հնարավոր խախտման փաստ: Մասնավորապես՝ Հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների միջև առկա է փոխկապակցվածություն: Սույն հանգամանքի մասին է վկայում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում (https://www.e-register.am) առկա տեղեկատվությունը, համաձայն որի՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի տնօրենը և 100% բաժնեմաս ունեցող մասնակիցը Մայիս Վահրադյանն է, իսկ «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի 100% բաժնեմաս ունեցող մասնակիցը Տաթևիկ Մայիսի Վահրադյանն է, ինչպես նաև Հանձնաժողովի՝ 2018 թվականի ապրիլի 20-ին տեղի ունեցած նիստի ժամանակ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների ներկայացուցիչների հայտնած

դիրքորոշումը, որով վերջիններս հաստատել են, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի տնօրեն և 100% բաժնեմաս ունեցող մասնակից Մայիս Վահրադյանը և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ում 100% բաժնեմաս ունեցող մասնակից Տաթևիկ Մայիսի Վահրադյանը հայր և դուստր են, այսինքն՝ ընտանիքի անդամներ:

Սույն վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունների գործողություններում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով արգելված հակամրցակցային համաձայնության հատկանիշներ առկա չեն:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը 22.05.2018թ. թիվ ԱՇ/285-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, առաջարկելով քննարկել «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը:

Դրա հետ մեկտեղ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.05.2018թ. թիվ 253 գրությամբ Շնողի համայնքապետարանը հայտնել է, որ Պատվիրատուն հարցում է կատարել Ստեփանավանի ՔԿԱԳ տարածքային բաժին խնդրելով տրամադրել տեղեկատվություն ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Չարենցի փող. 175 2 հասցեում գրանցված Տաթևիկ Մայիսի Վահրադյանի ծննդյան փաստի և ծնողների ինքնության վերաբերյալ:

Համաձայն Ստեփանավանի ՔԿԱԳ բաժնի կողմից ստացված պատասխանի՝ ՀՀ Լոռու մարզի ք. Ստեփանավան, Չարենցի փող. 175 հասցեում գրանցված «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի տնօրեն և իրական շահառու հանդիսացող Մայիս Իշխանի Վարդանյանը և ՀՀ Արարատի մարզի գ. Հայանիստ, Էջմիածնի 35 հասցեում գտնվող «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի իրական շահառու հանդիսացող Տաթևիկ Մայիսի Վահրադյանը հանդիսանում են հայր և դուստր, փոխկապակցված են միմյանց հետ և ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի կողմից հայտարարված «ԼՄՇՀ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին Պատվիրատուի ունեցած բանավոր տեղեկատվության համաձայն մասնակցել են նախնական պայմանավորվածությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Դրա հետ մեկտեղ Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և(կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը հստակ սահմանում է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը: Դրա հետ մեկտեղ Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է փոխկապապակցված անձանց կողմից գնման միևնույն գործընթացին միաժամանակյա մասնակցելու արգելքը:

Ուսումնասիրելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 22.05.2018թ. թիվ ԱԾ/285-18 գրությամբ ներկայացված հիմքերը և դրանք համադրելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 7-րդ հոդվածի 4-րդ մասի հետ, գտնում եմ, որ փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն ընթացակարգին, հանդիսանալով մասնակիցների հայտը մերժելու հիմք, միևնույն ժամանակ չի հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք:

Դրա հետ մեկտեղ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը սահմանում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Նշված կետի իմաստից բխում է, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվում են պատվիրատուի կողմից, որը տվյալ դեպքում հանդիսանում է Շնողի համայնքապետարանը: Մինչդեռ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ընկերությունների տվյալները ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկվել է ոչ թե պատվիրատու ՀՀ Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի, այլ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Վահրադյան Շին» և «Մ.ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունները թույլ չեն տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի խախտում, ուստի Ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.05.2018թ. թիվ 03/26-3/9456-18 գրությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06406394) և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04727286) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ